Երկար խօսակցութիւնից յետոյ, որ մի առ մի չեմ ուզում յիշել, Ասլանը խնդրեց Հայրիկից, որ ցոյց տայ իր վանքի հիմնարկութիւնները:

— Մենք ամէն ինչ դեռ նոր ենք սկսում, պարոն բժշկապետ, — ասաց Հայրիկը, — այդ պատճառով մեր հիւրերին ցոյց տալու դեռ մի արժանաւոր բան չունենք: Մեզ մօտ ամէն ինչ դեռ իր տղայութեան մէջն է:

— Հէնց այդ հասակից կերեւայ ապագայ էակը, գոնէ ֆիզիկական կողմից, թէ որքան առողջ է եւ որքան լաւ է կազմուած:

— Այդ ճշմարիտ, բայց շատ անգամ ամենաառողջ տղան եւս ջլատւում է, այլանդակւում է վատ դայակների եւ խորթ մայրերի ձեռքում:

Մենք դուրս եկանք սենեակից: Վանքի բակում ոչ ոք չէր երեւում, մի զոյգ աղաւնիներ միայն ճեմում էին պարտէզի կանաչազարդ ածուների շուրջը, նրանք եւս, երբ մեզ տեսան, թռան նստեցին բարձր զանգակատան գերանի վրայ: Ոչ մի վանքում զանգակները այնպէս հանգիստ չէին, որպէս այստեղ: Կտուց անապատում նրանք հնչում էին ամէն ժամ, ամէն րոպէ, եւ հրաւիրում էին «մշտապաշտօնէ միաբաններին շարունակելու անընդհատ ժամերգութիւնը: Իսկ այստեղ մերթ ընդ մերթ լսւում էր դպրոցի զանգակի ձայնը, որ որոշում էր դասամիջոցները: Աշակերտները խմբով դուրս էին թափւում, եւ վանական լուռ, խաղաղ պարիսպների մէջ տիրում էր մի կենդանի աղմուկ: Ոչինչ այնպէս ախորժելի չէր կարող լինել, քան թէ այդ աղմուկը, մանուկ սերնդի սրտի եւ հոգու ձայնը, որի արձագանքը լսելի է լինում ապագայում...

Հայրիկը տարաւ մեզ նախ գրատունը, որ բաղկացած էր երեք սենեակներից, որոնց դռները բացւում էին միմեանց մէջ: Երբ մտանք առաջին սենեակը, նա ասաց.

— Այստեղ հաւաքուած են բոլոր տպագրուած գրքերը, թէ՛ հայոց եւ թէ՛ օտար լեզուներով: Մեր միաբաններից իւրաքանչիւրը կարող է որոշեալ ժամերում մտնել այստեղ եւ օգուտ քաղել գրքերից:

Սենեակում բաւական լոյս կար. մէջտեղում դրած էր երկար բասեղան, ծածկած կանաչագոյն մահուդով, իսկ նրա վրայ դարսած էին մի քանի լրագիրներ եւ ամսագիրներ, որ նոր էին ստացուել: Սենեակի շուրջը, փայտեայ մեծ պահարանների մէջ, կարգով դասաւորուած էին զանազան գրքեր, որ երեւում էին ապակիների ետեւից: Դէպի որ կողմը եւ նայում էի, աչքի էր ընկնում կարգ, ճաշակ, մաքրութիւն եւ պարզութիւն: Այս սենեակը թէ՛ գրատուն եւ թէ՛ ընթերցարան էր. այստեղից մտանք մի այլ սենեակ, որը ցոյց տալով, ասաց Հայրիկը.